ԴԱՏԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ 2022-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԲԽՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ							
Հաշվետու ժամանակաշրջան	**2024 թվականի 2-րդ կիսամյակ**						
ՆՊԱՏԱԿ 1. «ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ» ՄԻԱՍՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՈՒՄ ԵՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԲԱԶԱՆԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ ՈՒ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ							
Վերջնական արդյունք	**Դատական պաշտպանության իրավունքի, արդարադատության ոլորտի մարմիններին և Արդարադատության նախարարությանը վերապահված հանրային գործառույթների արդյունավետ և մատչելի իրականացումը առավելապես երաշխավորված է**						
Գործողություն	**Թիրախ**		**Կատարման ժամկետ**	**Կարգավիճակ**	**Նշումներ**	**Ֆինանսական աղբյուր**	**Ստուգման միջոց**
1.3. Մշակել, ներդնել և գործարկել «Էլեկտրոնային դատարան» դատական գործերի էլեկտրոնային կառավարման միասնական համակարգի վարչական գործերով էլեկտրոնային մոդուլը	Մշակվել, ներդրվել և գործարկվել է «Էլեկտրոնային դատարան» դատական գործերի էլեկտրոնային կառավարման միասնական համակարգի վարչական գործերով էլեկտրոնային մոդուլը		2024 թվականի 3-րդ եռամսյակ	Մասնակի կատարված	Վարչական դատավարության էլեկտրոնային համակարգը մշակման փուլում է: Համակարգի մշակման պայմանագիրը ՀՀ արդարադատության նախարարության և «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամի միջև կնքվել է 22.06.2023 թվականին:Արդեն իսկ ընդունվել են պայմանագրի 1-ի և 2-րդ փուլերի աշխատանքները, որոնց շրջանակներում իրականացվել են ծրագրային ապահովման պահանջների նկարագրի մշակումը և հաստատում, այնուհետև՝ մշակվել է էլեկտրոնային համակարգը:Արդեն իսկ մեկնարկել են Պայմանագրի 3-րդ փուլի աշխատանքներն, այդ թվում՝ շահառուների վերապատրաստումներ (վարչական մասնագիտացմամբ դատարանների գրասենյակների աշխատակիցների և դատավորների կազմեր, Վարչական դատարանի, Վերաքննիչ վարչական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի վարչական պալատի դատավորներ, փաստաբաններ, պետական կառավարման մարմինների ներկայացուցիչներ), համակարգի պիլոտային գործարկում:Միաժամանակ, պայմանագրի և Տեղեկատվական համակարգերի կառավարման խորհրդի 2024 թ. սեպտեմբերի 20-ի նիստում կայացված որոշման համաձայն՝ մրցույթով ներգրավված մասնագիտացված ընկերության կողմից իրականացվում են համակարգի SS թեստավորումներ՝ պայմանագրի 2-րդ փուլի աշխատանքների ընդունման նպատակով: Թեստավորումների արդյունքները կներկայացվեն Արդարադատության նախարարությանը մինչև 2025 թ. հունվարի 20-ը, որից հետո՝ թեստավորումների դրական ելքի դեպքում կընդունվեն պայմանագրի 3-րդ փուլի աշխատանքները և կմեկնարկի պայմանագրի 4-րդ՝ համակարգի գործարկման փուլը:Համակարգը նախատեսվում է գործարկել 2025 թ. գարնանը:		Համակարգի հղումը՝ https://adcourt-front.asd.am/signin

Արդյունքային ցուցանիշ	**Առկա ցուցանիշ**	**Արդյունքին հասնելու ժամկետ**	**Ցուցանիշի թիվը**		**Նշումներ**	**Տվյալների հավաքման միջոց**
1.3.1. Վարչական դատավարության շրջանակներում իրականացվող դատական գործառույթներն իրականացվում են էլեկտրոնային եղանակով		2024 թվականի 3-րդ եռամսյակ	**Նախատեսված**	20	Արդյունքային ցուցանիշները կնևավորվեն էլեկտրոնային համակարգի գործարկումից հետո:	Արդյունքային ցուցանիշները կնևավորվեն էլեկտրոնային համակարգի գործարկումից հետո:
			Փաստացի	0		
			Շեղում			
1.3.2. Դատավարական գործողությունները (էլեկտրոնային հայցադիմումների, հակընդդեմ հայցերի, էլեկտրոնային պատասխանների, ապացույցների, միջնորդությունների ներկայացում) իրականացվում են էլեկտրոնային եղանակով		2024 թվականի 3-րդ եռամսյակ	**Նախատեսված**	5	Արդյունքային ցուցանիշները կնևավորվեն էլեկտրոնային համակարգի գործարկումից հետո:	Արդյունքային ցուցանիշները կնևավորվեն էլեկտրոնային համակարգի գործարկումից հետո:
			Փաստացի	0		
			Շեղում			

Գործողություն	**Թիրախ**	**Կատարման ժամկետ**	**Կարգավիճակ**	**Նշումներ**	**Ֆինանսական աղբյուր**	**Ստուգման միջոց**

1.4. Մշակել, ներդնել և գործարկել «Էլեկտրոնային դատարան» դատական գործերի էլեկտրոնային կառավարման միասնական համակարգի քրեական գործերով էլեկտրոնային մոդուլը	Մշակվել և ներդրվել է «Էլեկտրոնային դատարան» դատական գործերի էլեկտրոնային կառավարման միասնական համակարգի քրեական գործերով էլեկտրոնային մոդուլը		2024 թվականի 4-րդ եռամսյակ	Չկատարված	Մշակվել է տեխնիկական առաջադրանքի նախագիծ: Սակայն քրեական վարույթի դատական փուլը թվայնացնող համակարգի ներդնումը սերտորեն կապված է մինչդատական քրեական վարույթի էլեկտրոնային համակարգի պատշաճ կիրառման հետ, բացի այդ՝ մինչդատական փուլում թղթային հատորներով գործերի վարման պայմաններում դատարանում թվային համակարգի ներդնումը չի ապահովի վարույթի թվայնացումը: Այս համատեքստում հարկ է նշել, որ Տեղեկատվական համակարգերի կառավարման խորհրդի կողմից հավանության է արժանացել Գլխավոր դատախազության՝ մինչդատական վարույթի համակարգը բարելավելու առաջարկը: Հաշվի առնելով այն, որ դատական մոդուլի մասով արդեն իսկ առկա է տեխնիկական առաջադրանքի նախագիծ՝ այն կվերանայվի և կպատրաստվի մրցութային փաթեթ՝ մինչդատական համակարգի բարելավման աշխատանքների իրականացմանը համահունչ:		Առկա չէ:
Արդյունքային ցուցանիշ	**Առկա ցուցանիշ**	**Արդյունքին հասնելու ժամկետ**	**Ցուցանիշի թիվը**		**Նշումներ**		**Տվյալների հավաքման միջոց**
1.4.1. Քրեական վարույթի շրջանակներում իրականացվող դատական գործառույթներն իրականացվում են էլեկտրոնային եղանակով		2024 թվականի 4-րդ եռամսյակ	**Նախատեսված**	20	Քրեական վարույթի դատական փուլը թվայնացնող համակարգի ներդնումը սերտորեն կապված է մինչդատական քրեական վարույթի էլեկտրոնային համակարգի պատշաճ կիրառման հետ, բացի այդ՝ մինչդատական փուլում թղթային հատորներով գործերի վարման պայմաններում դատարանում թվային համակարգի ներդնումը չի ապահովի վարույթի թվայնացումը: Այս համատեքստում հարկ է նշել, որ Տեղեկատվական համակարգերի կառավարման խորհրդի կողմից հավանության է արժանացել Գլխավոր դատախազության՝ մինչդատական վարույթի համակարգը բարելավելու առաջարկը: Հաշվի առնելով այն, որ դատական մոդուլի մասով արդեն իսկ առկա է տեխնիկական առաջադրանքի նախագիծ՝ այն կվերանայվի և կպատրաստվի մրցութային փաթեթ՝ մինչդատական համակարգի բարելավման աշխատանքների իրականացմանը համահունչ:		Մինչդատական քրեական վարույթի էլեկտրոնային համակարգի բարելավման կոնցեպտը հաստատվել է Տեղեկատվական համակարգերի կառավարման խորհրդի 2024 թվականի հոկտեմբերի 25-ի նիստում:
			Փաստացի	0			
			Շեղում				
1.4.2. Քրեական դատավարական գործողությունները իրականացվում է էլեկտրոնային եղանակով		2024 թվականի 4-րդ եռամսյակ	**Նախատեսված**	3	Քրեական վարույթի դատական փուլը թվայնացնող համակարգի ներդնումը սերտորեն կապված է մինչդատական քրեական վարույթի էլեկտրոնային համակարգի պատշաճ կիրառման հետ, բացի այդ՝ մինչդատական փուլում թղթային հատորներով գործերի վարման պայմաններում դատարանում թվային համակարգի ներդնումը չի ապահովի վարույթի թվայնացումը: Այս համատեքստում հարկ է նշել, որ Տեղեկատվական համակարգերի կառավարման խորհրդի կողմից հավանության է արժանացել Գլխավոր դատախազության՝ մինչդատական վարույթի համակարգը բարելավելու առաջարկը: Հաշվի առնելով այն, որ դատական մոդուլի մասով արդեն իսկ առկա է տեխնիկական առաջադրանքի նախագիծ՝ այն կվերանայվի և կպատրաստվի մրցութային փաթեթ՝ մինչդատական համակարգի բարելավման աշխատանքների իրականացմանը համահունչ:		Մինչդատական քրեական վարույթի էլեկտրոնային համակարգի բարելավման կոնցեպտը հաստատվել է Տեղեկատվական համակարգերի կառավարման խորհրդի 2024 թվականի հոկտեմբերի 25-ի նիստում:
			Փաստացի	0			
			Շեղում				
Գործողություն	**Թիրախ**		**Կատարման ժամկետ**	**Կարգավիճակ**	**Նշումներ**	**Ֆինանսական աղբյուր**	**Ստուգման միջոց**
1.5. Համակցել «Էլեկտրոնային դատարան» դատական գործերի էլեկտրոնային կառավարման միասնական համակարգի քրեական գործերով էլեկտրոնային մոդուլը դատավարության գործընթացում ներգրավված (տեղեկատվություն տրամադրող/ստացող) իրավասու մարմինների գործող էլեկտրոնային համակարգերի հետ	«Էլեկտրոնային դատարան» դատական գործերի էլեկտրոնային կառավարման միասնական համակարգը համակցվել է դատավարության գործընթացում ներգրավված (տեղեկատվություն տրամադրող/ստացող) իրավասու մարմինների գործող էլեկտրոնային համակարգերի հետ		2024 թվականի 3-րդ եռամսյակ	Չկատարված	Դեռևս քրեական մոդուլը ներդրված չէ, առկա է տեխնիկական առաջադրանքի նախագիծ: Քրեական վարույթի դատական փուլը թվայնացնող համակարգի ներդնումը սերտորեն կապված է մինչդատական քրեական վարույթի էլեկտրոնային համակարգի պատշաճ կիրառման հետ, բացի այդ՝ մինչդատական փուլում թղթային հատորներով գործերի վարման պայմաններում դատարանում թվային համակարգի ներդնումը չի ապահովի վարույթի թվայնացումը: Այս համատեքստում հարկ է նշել, որ Տեղեկատվական համակարգերի կառավարման խորհրդի կողմից հավանության է արժանացել Գլխավոր դատախազության՝ մինչդատական վարույթի համակարգը բարելավելու առաջարկը: Հաշվի առնելով այն, որ դատական մոդուլի մասով արդեն իսկ առկա է տեխնիկական առաջադրանքի նախագիծ՝ այն կվերանայվի և կպատրաստվի մրցութային փաթեթ՝ մինչդատական համակարգի բարելավման աշխատանքների իրականացմանը համահունչ: Համակցումը (փոխգործելիության ապահովումը) կիրականացվի համակարգի ներդրման ընթացքում:		Առկա չէ:
Արդյունքային ցուցանիշ	**Առկա ցուցանիշ**	**Արդյունքին հասնելու ժամկետ**	**Ցուցանիշի թիվը**		**Նշումներ**		**Տվյալների հավաքման միջոց**
1.5.1. Դատական, իրավապահ և իրավակիրառ մարմինների միջև փաստաթղթաշրջանառությունն իրականացվում է էլեկտրոնային եղանակով		2024 թվականի 3-րդ եռամսյակ	**Նախատեսված**	20	Քրեական վարույթի դատական փուլը թվայնացնող համակարգի ներդնումը սերտորեն կապված է մինչդատական քրեական վարույթի էլեկտրոնային համակարգի պատշաճ կիրառման հետ, բացի այդ՝ մինչդատական փուլում թղթային հատորներով գործերի վարման պայմաններում դատարանում թվային համակարգի ներդնումը չի ապահովի վարույթի թվայնացումը: Այս համատեքստում հարկ է նշել, որ Տեղեկատվական համակարգերի կառավարման խորհրդի կողմից հավանության է արժանացել Գլխավոր դատախազության՝ մինչդատական վարույթի համակարգը բարելավելու առաջարկը: Հաշվի առնելով այն, որ դատական մոդուլի մասով արդեն իսկ առկա է տեխնիկական առաջադրանքի նախագիծ՝ այն կվերանայվի և կպատրաստվի մրցութային փաթեթ՝ մինչդատական համակարգի բարելավման աշխատանքների իրականացմանը համահունչ:		Մինչդատական քրեական վարույթի էլեկտրոնային համակարգի բարելավման կոնցեպտը հաստատվել է Տեղեկատվական համակարգերի կառավարման խորհրդի 2024 թվականի հոկտեմբերի 25-ի նիստում:
			Փաստացի	0			
			Շեղում				
1.5.2. Դատավարության գործընթացում ներգրավված իրավասու մարմինների միջև պաշտոնական էլեկտրոնային		2024 թվականի 3-րդ եռամսյակ	**Նախատեսված**	այո	Քրեական վարույթի դատական փուլը թվայնացնող համակարգի ներդնումը սերտորեն կապված է մինչդատական քրեական վարույթի էլեկտրոնային համակարգի պատշաճ կիրառման հետ, բացի այդ՝ մինչդատական փուլում թղթային հատորներով գործերի վարման պայմաններում դատարանում թվային համակարգի ներդնումը չի ապահովի վարույթի թվայնացումը: Այս համատեքստում հարկ է նշել, որ Տեղեկատվական համակարգերի		Մինչդատական քրեական վարույթի էլեկտրոնային համակարգի բարելավման կոնցեպտը հաստատվել է Տեղեկատվական համակարգերի կառավարման խորհրդի

նամակագրությունը, այդ թվում՝ դատավորների պաշտոնական էլեկտրոնային անձնական գրասենյակների առկայությունը, էլեկտրոնային փաստաթղթերի շրջանառությունը գործի բոլոր մասնակիցների միջև, ինչպես նաև՝ իրավասու պետական մարմինների հետ իրականացվում են էլեկտրոնային միասնական համակարգի միջոցով			**Փաստացի**	Ոչ	կառավարման խորհրդի կողմից հավանության է արժանացել Գլխավոր դատախազության՝ մինչդատական վարույթի համակարգը բարելավելու առաջարկը: Հաշվի առնելով այն, որ դատական մոդուլի մասով արդեն իսկ առկա է տեխնիկական առաջադրանքի նախագիծ՝ այն կվերանայվի և կպատրաստվի մրցութային փաթեթ՝ մինչդատական համակարգի բարելավման աշխատանքների իրականացմանը համահունչ:		2024 թվականի հոկտեմբերի 25-ի նիստում:
			Շեղում				
Գործողություն	**Թիրախ**		**Կատարման ժամկետ**	**Կարգավիճակ**	**Նշումներ**	**Ֆինանսական աղբյուր**	**Ստուգման միջոց**
1.6. Ներդնել հանրության համար հասանելի առցանց ռեժիմում գործող դատարանների գործունեությունն ամփոփող զեկույցների և վիճակագրության հրապարակման կառուցակարգ	Մշակվել և ներդրվել են հանրության համար հասանելի առցանց ռեժիմում գործող դատարանների գործունեությունն ամփոփող զեկույցների և վիճակագրության հրապարակման կառուցակարգի օրենսդրական հիմքերը և ծրագրային ապահովումը		2024 թվականի 2-րդ կիսամյակ	Չկատարված	Կազմակերպվել են մի շարք ֆոկուս-խմբային քննարկումներ,ուսումնասիրվել են առկա ծրագրային լուծումները: Կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ դատական գործերի մակագրության և բաշխման համակարգը տեխնիկապես հին է, չունի վիճակագրական լայն հնարավորություններ, այդ պատճառով «court.am» կայքում հրապարակվող վիճակագրությունը մարդկային ռեսուրսների ներգրավմամբ Դատական դեպարտամենտի կողմից հավաքվում է դատարաններից և միացվում մեկ տեղում: Ըստ այդմ՝ առցանց դատական որակյալ և դինամիկ վիճակագրություն ապահովելը համակարգային հիմնախնդիր է, և անհրաժեշտ է այն հասցեագրել առաջին հերթին դատական գործերի մակագրության և բաշխման ժամանակակից համակարգ ունենալու համատեքստում: Բացի այդ, դատարաններից պատշաճ և ամբողջական ինքնաշխատ վիճակագրություն ստանալու տեսանկյունից հիմնական խնդիրը էլեկտրոնային արդարադատության միասնական հարթակի դեռևս բացակայությունն է, որտեղ պետք է ներդրվեր միասնական գործիքակազմ՝ տարբեր համակարգերից մեկ տեղում տվյալներ արտացոլելով: Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալության աջակցությամբ դիտարկվում է էլեկտրոնային արդարադատության միասնական համակարգի էստոնական փորձը, ինչը կծառայի որպես ուղենիշ այս գործընթացում: Զուգահեռաբար, նաև ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ, ներկայումս ուսումնասիրվում են դատական համակարգի առկա ծրագրային լուծումները, հատկապես՝ գործերի մակագրության և բաշխման պատշաճ կառուցակարգ ունենալու տեսանկյունից: Առաջնահերթ նաև այս համակարգի խնդիրները հասցեագրելով արդարադատության միասնական էլեկտրոնային համակարգի համատեքստում հնարավոր կլինի ապահովել պատշաճ առցանց վիճակագրության առկայություն:		Առկա չէ ներկայումս:
Արդյունքային ցուցանիշ	**Առկա ցուցանիշ**	**Արդյունքին հասնելու ժամկետ**	**Ցուցանիշի թիվը**		**Նշումներ**		**Տվյալների հավաքման միջոց**
1.6.1. Դատական վիճակագրական տեղեկատվությունը ստացվում է առցանց ռեժիմում		2024 թվականի 2-ին կիսամյակ	**Նախատեսված**	այո	Կազմակերպվել են մի շարք ֆոկուս-խմբային քննարկումներ,ուսումնասիրվել են առկա ծրագրային լուծումները: Կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ դատական գործերի մակագրության և բաշխման համակարգը տեխնիկապես հին է, չունի վիճակագրական լայն հնարավորություններ, այդ պատճառով «court.am» կայքում հրապարակվող վիճակագրությունը մարդկային ռեսուրսների ներգրավմամբ Դատական դեպարտամենտի կողմից հավաքվում է դատարաններից և միացվում մեկ տեղում: Ըստ այդմ՝ առցանց դատական որակյալ և դինամիկ վիճակագրություն ապահովելը համակարգային հիմնախնդիր է, և անհրաժեշտ է այն հասցեագրել առաջին հերթին դատական գործերի մակագրության և բաշխման ժամանակակից համակարգ ունենալու համատեքստում: Բացի այդ, դատարաններից պատշաճ և ամբողջական ինքնաշխատ վիճակագրություն ստանալու տեսանկյունից հիմնական խնդիրը էլեկտրոնային արդարադատության միասնական հարթակի դեռևս բացակայությունն է, որտեղ պետք է ներդրվեր միասնական գործիքակազմ՝ տարբեր համակարգերից մեկ տեղում տվյալներ արտացոլելով: Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալության աջակցությամբ դիտարկվում է էլեկտրոնային արդարադատության միասնական համակարգի էստոնական փորձը, ինչը կծառայի որպես ուղենիշ այս գործընթացում: Զուգահեռաբար, նաև ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ, ներկայումս ուսումնասիրվում են դատական համակարգի առկա ծրագրային լուծումները, հատկապես՝ գործերի մակագրության և բաշխման պատշաճ կառուցակարգ ունենալու տեսանկյունից: Առաջնահերթ նաև այս համակարգի խնդիրները հասցեագրելով արդարադատության միասնական էլեկտրոնային համակարգի համատեքստում հնարավոր կլինի ապահովել պատշաճ առցանց վիճակագրության առկայություն:		Առկա չէ:
			Փաստացի	Ոչ			
			Շեղում				
Գործողություն	**Թիրախ**		**Կատարման ժամկետ**	**Կարգավիճակ**	**Նշումներ**	**Ֆինանսական աղբյուր**	**Ստուգման միջոց**
1.8. Ներդնել և գործարկել «Էլեկտրոնային արդարադատություն» միասնական հարթակը	Ներդրվել և գործարկվել է քաղաքացիական, վարչական, սնանկության և քրեական դատական գործերով մոդուլներից բաղկացած «Էլեկտրոնային արդարադատություն» միասնական հարթակի մաս կազմող դատական միասնական էլեկտրոնային համակարգը		2024 թվականի 4-րդ եռամսյակ	Չկատարված	Համակարգի ներդրմանն էր ուղղված Եվրոպական միության «Էլեկտրոնային լուծումների մշակում և ներդնում Հայաստանում» տեխնիկական աջակցության ծրագիրը: Ծրագրի առնչությամբ վերջնական՝ 2024 թվականի օգոստոսին ավարտված մշտադիտարկումը ցույց է տվել, որ ստացված արդյունքները բավարար չեն, չի մշակվել պահանջվող համակարգը Արդյունքում, միասնական պատշաճ համակարգ ներդնելու նպատակով, կրկին իրականացվում է կարիքների գնահատում, համակարգերի ուսումնասիրություն, արդյունքում՝ միասնական համակարգի կոնցեպտի մշակում:		Առկա չէ:

Արդյունքային ցուցանիշ	Առկա ցուցանիշ	Արդյունքին հասնելու ժամկետ	Ցուցանիշի թիվը		Նշումներ	Տվյալների հավաքման միջոց
1.8.1. «Էլեկտրոնային արդարադատություն» միասնական հարթակի մաս կազմող «Էլեկտրոնային դատարան» դատական գործերի էլեկտրոնային կառավարման միասնական համակարգի շրջանակներում ապահովվել է դատավարության թվայնացումը		2024 թվականի 4-րդ եռամսյակ	Նախատեսված	20	Համակարգի ներդրմանն էր ուղղված Եվրոպական միության «Էլեկտրոնային լուծումների մշակում և ներդնում Հայաստանում» տեխնիկական աջակցության ծրագիրը: Ծրագրի առնչությամբ վերջնական՝ 2024 թվականի օգոստոսին ավարտված մշտադիտարկումը ցույց է տվել, որ ստացված արդյունքները բավարար չեն, չի մշակվել պահանջվող համակարգը Արդյունքում, միասնական պատշաճ համակարգ ներդնելու նպատակով, կրկին իրականացվում է կարիքների գնահատում, համակարգերի ուսումնասիրություն, արդյունքում՝ միասնական համակարգի կոնցեպտի մշակում:	Առկա չէ:
			Փաստացի	0		
			Շեղում			

Գործողություն	Թիրախ	Կատարման ժամկետ	Կարգավիճակ	Նշումներ	Ֆինանսական աղբյուր	Ստուգման միջոց
1.14. Ներդնել և գործարկել Հարկադիր կատարումն ապահովող ծառայության նոր էլեկտրոնային համակարգ	Ներդրվել է Հարկադիր կատարումն ապահովող ծառայության նոր էլեկտրոնային համակարգը	2024 թվականի 4-րդ եռամսյակ	Կատարված	Ներդրվել է Հարկադիր կատարումն ապահովող ծառայության նոր համակարգը:		https://cabinet.harkadir.am/

Արդյունքային ցուցանիշ	Առկա ցուցանիշ	Արդյունքին հասնելու ժամկետ	Ցուցանիշի թիվը		Նշումներ	Տվյալների հավաքման միջոց
1.14.1. Կատարելագործվել և ընդլայնվել է կատարողական վարույթում էլեկտրոնային ծանուցումների գործիքակազմի կիրառությունը		2024 թվականի 4-րդ եռամսյակ	Նախատեսված	30	2025թ. հուլիսի 1-ին «Կատարողական վարույթի մասին» օրենքի ուժի մեջ մտնելուց հետո ակնկալվում է, որ առնվազն 30 տոկոսով կընդլայնվի կատարողական վարույթում էլեկտրոնային ծանուցումների գործիքակազմի կիրառությունը, քանի որ, ի տարբերություն գործող օրենքի, նոր օրենքում ի թիվս այլնի, ընդլայնվել է վարույթի կողմերին էլեկտրոնային եղանակներով ծանուցելու եղանակները: Նույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո, որտեղ կարգավորվում է նաև Ծառայության կողմից ներդրված և նոր համակարգին համակցված Անձնական գրասենյակի հետ կապված հարաբերությունները, ակնկալվում է, որ առնվազն 50 տոկոսով կընդլայնվի անձնական էլեկտրոնային գրասենյակի օգտատերերի շրջանակը (2024թ. ընթացքում գրասենյակում գրանցված օգտատերերի թիվը կազմում է շուրջ 20.000 և ամենօրյա ռեժիմով թիվը ավելանում է), կատարողական վարույթի կողմերի մասնակցությամբ փաստաթղթաշրջանառությունն առնվազն 30 տոկոսով, այդ թվում՝ ծանուցումները մեծապես կիրականացվի անձնական էլեկտրոնային գրասենյակի միջոցով, ինչի արդյունքում կնվազի կատարողական վարույթի մասնակիցների և հարկադիր կատարողի անմիջական շփման անհրաժեշտությունը և կզսպվի դրանից բխող ռիսկերը:	«Կատարողական վարույթի մասին» օրենք 23-րդ հոդված
			Փաստացի	30		
			Շեղում			
1.14.2. Հարկադիր կատարումն ապահովող ծառայության էլեկտրոնային հարթակի և այլ գերատեսչությունների հետ անհրաժեշտ կապուղիների անխափան աշխատանքի արդյունքում փաստաթղթաշրջանառության համար պահանջվող ժամանակահատվածը կրճատվել է		2024 թվականի 4-րդ եռամսյակ	Նախատեսված	30	Հաշվետու տարում Ծառայության և ՆԳՆ համագործակցության արդյունքում՝ա. Ոստիկանության կողմից տրամադրվել է պարտավոր անձանց կողմից վճարումների վերաբերյալ ավտոմատ եղանակով տեղեկատվություն ստանալու հնարավորություն, ինչը գրեթե բացառում է արդեն իսկ պարտավորությունը կատարած անձից տեղեկատվության բացակայության պատճառով կրկնակի բռնագանձում իրականացնելու հնարավորությունը:բ. Նույն կառույցի Միգրացիայի և քաղաքացիության ծառայության հետ համատեղ ներդրվել է Քաղաքացիությունից հրաժարվող անձանց պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքը ինքնաշխատ ստանալու մեխանիզմ, որը վերացրել է թղթային եղանակով հարցումներ իրականացնելու և պատասխանները ստանալու գործընթացը:դ. Ամբողջությամբ ավտոմատացվել է նաև լուծարման գործընթացում գտնվող իրավաբանական անձանց պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքի ստացման գործընթացը: Էլեկտրոնային համակարգը համակցված է այլ պետական մարմինների (Պետական եկամուտների կոմիտեի, Կադաստրի կոմիտեի, Ոստիկանության, Սոցիալական ապահովության ծառայության, Կենտրոնական բանկի), Երևանի քաղաքապետարանի, առևտրային բանկերի, Կենտրոնական դեպոզիտարիայի և այլ կազմակերպությունների գործող էլեկտրոնային համակարգերին: Ներդրվել և գործարկվել է ՀՀ գործող արբիտրաժային տրիբունալների կողմից ներկայացված վճիռների, նոտարների կողմից արձակված համապատասխան ակտերի՝ էլեկտրոնային եղանակով հարկադիր կատարման ներկայացնելու համակարգերը:	"Դատական ակտերի հարկադիր կատարման մասին" օրենք
			Փաստացի	90		
			Շեղում			
1.14.3. Վարույթի մասնակիցների անձնական տվյալների և ծառայության թվային շտեմարանի հնարավոր կորստի կամ արտահոսքի ռիսկերը նվազեցված են		2024 թվականի 4-րդ եռամսյակ	Նախատեսված	50	Ծառայության կողմից ձեռք է բերվել և արդիականացվել է սերվերային հանգույցները, որոնք հնարավորություն են տվել ապահովել վարույթի ընթացքում ձեռք բերված տվյալների պահպանությունը: Արդյունքով, վարույթի մասնակիցների անձնական տվյալների և ծառայության թվային շտեմարանի հնարավոր կորստի կամ արտահոսքի ռիսկերը նվազեցված են:	Վարույթի մասնակիցների անձնական տվյալների և ծառայության թվային շտեմարանի հնարավոր կորստի և/կամ արտահոսքի ռիսկերը նվազեցված են, քանի որ տվյալների պատճենները պահվում են էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակում տեղակայված սերվերային հանգույցում
			Փաստացի	50		
			Շեղում			

1.14.4. Կատարողական վարույթի շրջանակում ծախսվող ֆինանսական ռեսուրսները կրճատվել են		2024 թվականի 4-րդ եռամսյակ	**Նախատեսված**	10	ՀԿԱ ծառայության նոր էլեկտրոնային համակարգի ներդրման և կատարողական վարույթի թվայնացման շնորհիվ կրճատվել են կատարողական վարույթի շրջանակում ծախսվող ֆինանսական ռեսուրսները	Դատական ակտերի հարկադիր կատարման մասին օրենք, 30.04.2020թ. «Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջև էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության, տվյալների փոխանակման և էլեկտրոնային հարցումների իրականացման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 687 որոշում.
			Փաստացի	10		
			Շեղում			
1.14.5. Ապահովվել է կատարողական վարույթի կողմերի համար կատարողական վարույթին առնչվող տեղեկատվության և փաստաթղթերի թվային հասանելիությունը		2024 թվականի 4-րդ եռամսյակ	**Նախատեսված**	80	ՀԿԱ ծառայությունում ներդրվել է Անձնական գրասենյակի էլեկտրոնային հարթակը, որտեղ գրանցվելով վարույթը կողմերը կարող են հետևել իրենց վարույթի ողջ ընթացքին, ինչպես նաև գրանցվելով հարթակում վերջիններս կարող են տեղեկացված լինել իրենց վերաբերյալ կայացված որոշումների վերաբերյալ: Ավելին՝ նույն հարթակում գրանցվելու դեպքում նոր կատարողական վարույթի հարուցման կամ նոր որոշման կայացման դեպքում օգտատերը կծանուցվի այդ որոշման վերաբերյալ՝ հարթակում տրամադրված էլ. փոստի միջոցով:	https://cabinet.harkadir.am/Identity/Account/Login?ReturnUrl=%2Fdahkcabinet%2Fcabinet%2Fhome
			Փաստացի	90		
			Շեղում			
1.14.6. Ընդլայնվել է էլեկտրոնային եղանակով իրականացվող կատարողական գործողությունների շրջանակը		2024 թվականի 4-րդ եռամսյակ	**Նախատեսված**	50	ՀԿԱ ծառայությունում ներդրված էլեկտրոնային համակարգի արդյունքում կատարողական վարույթն ամբողջությամբ թվայնացվել է, ըստ այդմ, ընդլայնվել է էլեկտրոնային եղանակով իրականացվող կատարողական գործողությունների շրջանակը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիր, Դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարություն
			Փաստացի	95		
			Շեղում			
1.14.7. Կատարողական վարույթի կողմերի մասնակցությամբ փաստաթղթաշրջանառությունն, այդ թվում՝ ծանուցումները, մեծապես իրականացվում է անձնական էլեկտրոնային գրասենյակի միջոցով, ինչի արդյունքում նվազել է կատարողական վարույթի մասնակիցների և հարկադիր կատարողի անմիջական շփման անհրաժեշտությունը և զսպվել են դրանից բխող ռիսկերը		2024 թվականի 4-րդ եռամսյակ	**Նախատեսված**	30	ՀԿԱ ծառայության Անձնական գրասենյակ հարթակում կատարողական վարույթի կողմերի համար հասանալի են կատարողական վարույթին առնչվող տեղեկատվության և փաստաթղթերը, արդյունքում գրանցվելով հարթակում կողմերը կարող են հետևել իրենց վարույթի ողջ ընթացքին:Ինչ վերաբերվում է ծանուցումներին՝ 2025թ. հուլիսի 1-ին «Կատարողական վարույթի մասին» օրենքի ուժի մեջ մտնելուց հետո ակնկալվում է, որ առնվազն 30 տոկոսով կընդլայնվի կատարողական վարույթում էլեկտրոնային ծանուցումների գործիքակազմի կիրառությունը, քանի որ ի տարբերություն գործող օրենքի, նոր օրենքում, ի թիվս այլնի, ընդլայնվել է վարույթի կողմերին էլեկտրոնային եղանակներով ծանուցելու եղանակները:	Կատարողական վարույթի մասին օրենք https://cabinet.harkadir.am/Identity/Account/Login?ReturnUrl=%2Fdahkcabinet%2Fcabinet%2Fhome
			Փաստացի	30		
			Շեղում			
1.14.8. Ընդլայնվել է անձնական էլեկտրոնային գրասենյակի օգտատերերի շրջանակը		2024 թվականի 4-րդ եռամսյակ	**Նախատեսված**	50	2025թ. հուլիսի 1-ին «Կատարողական վարույթի մասին» օրենքի ուժի մեջ մտնելուց հետո, որտեղ կարգավորվում է նաև ՀԿԱ ծառայության կողմից ներդրված և նոր համակարգին համակցված Անձնական գրասենյակի հետ կապված հարաբերությունները, ակնկալվում է, որ առնվազն 50 տոկոսով կընդլայնվի անձնական էլեկտրոնային գրասենյակի օգտատերերի շրջանակը :Հաշվետու տարում ընդլայնվել է Անձնական գրասենյակի հնարավորություններն, մասնավորապես՝ ա. անձնական գրասենյակում կարող են գրանցվել ոչ միայն կատարողական վարույթով պարտապանը, այլ նաև պահանջատեր կողմը:2024թ. ընթացքում գրասենյակում գրանցված օգտատերերի թիվը կազմում է շուրջ 20.000 և ամենօրյա ռեժիմով թիվը ավելանում է:	https://cabinet.harkadir.am/Identity/Account/Login?ReturnUrl=%2Fdahkcabinet%2Fcabinet%2Fhome
			Փաստացի	25		
			Շեղում			
1.14.9. Էլեկտրոնային համակարգը համակցված է այլ պետական մարմինների (Պետական եկամուտների կոմիտեի, Կադաստրի կոմիտեի, Ոստիկանության, Սոցիալական ապահովության ծառայության, Կենտրոնական բանկի), Երևանի		2024 թվականի 4-րդ եռամսյակ	**Նախատեսված**	30	Էլեկտրոնային համակարգը համակցված է այլ պետական մարմինների (Պետական եկամուտների կոմիտեի, Կադաստրի կոմիտեի, Ոստիկանության, Սոցիալական ապահովության ծառայության, Կենտրոնական բանկի), Երևանի քաղաքապետարանի, առևտրային բանկերի, Կենտրոնական դեպոզիտարիայի և այլ կազմակերպությունների գործող էլեկտրոնային համակարգերին: Ներդրվել և գործարկվել է ՀՀ գործող արբիտրաժային տրիբունալների կողմից ներկայացված վճիռների, նոտարների կողմից արձակված համապատասխան ակտերի՝ էլեկտրոնային եղանակով հարկադիր կատարման ներկայացնելու համակարգերը: Ըստ այդմ, փաստաթղթաշրջանառության համար պահանջվող ժամանակահատվածը կրճատվել է առնվազն 30 տոկոսով:	Դատական ակտերի հարկադիրկատարման մասին ՀՀ օրենք, ՀՀ կառավարության 30.04.2020թ. «Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջև էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության, տվյալների
			Փաստացի	99		

քաղաքապետարանի, առևտրային բանկերի, Կենտրոնական դեպոզիտարիայի և այլ կազմակերպությունների գործող էլեկտրոնային համակարգերին, փաստաթղթաշրջանառության համար պահանջվող ժամանակահատվածը կրճատվել է			Շեղում			փոխանակման և էլեկտրոնային հարցումների իրականացման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 687 որոշում.
1.14.10. Հարկադիր էլեկտրոնային աճուրդների էլեկտրոնային համակարգի արդիականացման և Հարկադիր կատարումն ապահովող ծառայության նոր էլեկտրոնային համակարգի հետ համակցման արդյունքում գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու վերաբերյալ հայտարարության հրապարակման գործընթացի տևողությունը կրճատվել է		2024 թվականի 4-րդ եռամսյակ	Նախատեսված	50	Հարկադիր էլեկտրոնային աճուրդների էլեկտրոնային համակարգի արդիականացման և Հարկադիր կատարումն ապահովող ծառայության նոր էլեկտրոնային համակարգի հետ համակցման արդյունքում գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու վերաբերյալ հայտարարության հրապարակման գործընթացի տևողությունը կրճատվել է, քանի որ ողջ գործընթացը՝ հարկադիր էլեկտրոնային աճուրդի որոշման կայացումից մինչև փորձագետի եզրակացության ստացում դրա հիման վրա աճուրդի կայքում հայտարարության հրապարակումն և ամբողջ աճուրդային գործընթացն իրականացվում է էլեկտրոնային գործիքակազմի միջոցով:	"Դատական ակտերի հարկադիր կատարման մասին" ՀՀ օրենք "Հրապարակային սակարկությունների մասին" ՀՀ օրենք
			Փաստացի	50		
			Շեղում			
1.14.11. Էլեկտրոնային նոր գործիքների ներդրման և նոր մոդուլների համակցման արդյունքում բացառվել է նույն գործողությունը մի քանի անգամ կատարելու անհրաժեշտությունը		2024 թվականի 4-րդ եռամսյակ	Նախատեսված	80	Կատարողական վարույթն ամբողջությամբ թվանացվելու արդյունքում հարուցման պահից վարույթի ամբողջ ընթացքը իրականացվում է ավտոմատ եղանակով: Ավելին, ներդրվել է նոր ծրագրային մոդուլ, որի շնորհիվ կատարողական վարույթներով (բացառությամբ տոկոսներ կամ պարբերաբար վճարումներ նախատեսող պարտավորությունների) կատարված վճարումների մշակման գործընթացը ամբողջ ծավալով ավտոմատացվել է և իրականացվում է 24/7 ռեժիմով, որի արդյունքում վճարային տերմինալների միջոցով վճարելու դեպքում կ/վարույթները ավտոմատ կարճվում են, այդ թվում՝ ոչ աշխատանքային օրերին ու ժամերին, և արգելանքները վերացվում են:	"Դատական ակտերի հարկադիր կատարման մասին" օրենք
			Փաստացի	90		
			Շեղում			

Գործողություն	Թիրախ	Կատարման ժամկետ	Կարգավիճակ	Նշումներ	Ֆինանսական աղբյուր	Ստուգման միջոց
1.15. Արդիականացնել e-penitentiary էլեկտրոնային կառավարման համակարգը	Արդիականացվել է e-penitentiary էլեկտրոնային կառավարման համակարգը	2024 թվականի 3-րդ եռամսյակ	Մասնակի կատարված	Կատարվել է բիզնես գործընթացների վերլուծություն, որը ցույց է տվել, որ առկա համակարգի արդիականացումը արդյունավետ չէ, և անհրաժեշտ կլինի ներդնել նոր համակարգ: Ըստ այդմ՝ ուսումնասիրություններ են իրականացվել քրեակատարողական համակարգի հնարավորինս ամբողջական թվայնացման տեսանկյունից: Թվայնացման կոնցեպտը հաստատվել է Տեղեկատվական համակարգերի կառավարման խորհրդի կողմից: Վերջնականացվել է տեխնիկական առաջադրանքը, ներկայումս ամփոփվում է մրցութային փաթեթը՝ Պետական հատվածի չորրորդ ծրագրի շրջանակներում այն իրականացնելու համար:		Առկա չէ:

Արդյունքային ցուցանիշ	Առկա ցուցանիշ	Արդյունքին հասնելու ժամկետ	Ցուցանիշի թիվը		Նշումներ	Տվյալների հավաքման միջոց
1.15.1. Քրեակատարողական հիմնարկների էլեկտրոնային համակարգը արդիականացվել է		2024 թվականի 3-րդ եռամսյակ	Նախատեսված	40	Կատարվել է բիզնես գործընթացների վերլուծություն, որը ցույց է տվել, որ առկա համակարգի արդիականացումը արդյունավետ չէ, և անհրաժեշտ կլինի ներդնել նոր համակարգ: Ըստ այդմ՝ ուսումնասիրություններ են իրականացվել քրեակատարողական համակարգի հնարավորինս ամբողջական թվայնացման տեսանկյունից: Թվայնացման կոնցեպտը հաստատվել է Տեղեկատվական համակարգերի կառավարման խորհրդի կողմից: Վերջնականացվել է տեխնիկական առաջադրանքը, ներկայումս ամփոփվում է մրցութային փաթեթը՝ Պետական հատվածի չորրորդ ծրագրի շրջանակներում այն իրականացնելու համար:	Առկա չէ:
			Փաստացի	0		
			Շեղում			

Գործողություն	Թիրախ	Կատարման ժամկետ	Կարգավիճակ	Նշումներ	Ֆինանսական աղբյուր	Ստուգման միջոց
1.17. Արդիականացնել Իրավաբանական անձանց էլեկտրոնային գրանցման e-register համակարգը	Արդիականացվել է իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության էլեկտրոնային համակարգը	2024 թվականի 4-րդ եռամսյակ	Մասնակի կատարված	Ընդլայնվել է արդիականացման շրջանակը: Մասնավորապես՝ հիմքում ունենալով բիզնես սկսելու և վարելու կյանքի փորձառությունը՝ նախատեսվում է հնարավորինս թվայնացնել դրան առնչվող բոլոր գործառույթները: Ըստ այդմ՝ Պետական հատվածի արդիականացման չորրորդ ծրագրի շրջանակներում իրականացվել է երկփուլ մրցույթ, որի արդյունքներով ներկայումս իրականացվում են նախանշված համակարգի մշակման աշխատանքները:		Առկա չէ:

Արդյունքային ցուցանիշ	Առկա ցուցանիշ	Արդյունքին հասնելու ժամկետ	Ցուցանիշի թիվը		Նշումներ	Տվյալների հավաքման միջոց
1.17.1. Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության նոր էլեկտրոնային համակարգի ներդրումից հետո մեկ տարվա ընթացքում բարձրացել է էլեկտրոնային համակարգի միջոցով իրավաբանական անձանց գրանցումը և անհատ ձեռնարկատերերի հաշվառումը		2024 թվականի 4-րդ եռամսյակ	Նախատեսված	20	Ընդլայնվել է արդիականացման շրջանակը: Մասնավորապես՝ հիմքում ունենալով բիզնես սկսելու և վարելու կյանքի փորձառությունը՝ նախատեսվում է հնարավորինս թվայնացնել դրան առնչվող բոլոր գործառույթները: Ըստ այդմ՝ Պետական հատվածի արդիականացման չորրորդ ծրագրի շրջանակներում իրականացվել է երկփուլ մրցույթ, որի արդյունքներով ներկայումս իրականացվում են նախանշված համակարգի մշակման աշխատանքները:	Առկա չէ:
			Փաստացի	0		
			Շեղում			

Գործողություն	Թիրախ	Կատարման ժամկետ	Կարգավիճակ	Նշումներ	Ֆինանսական աղբյուր	Ստուգման միջոց
1.20. Մշակել և ներդնել նոտարի կողմից էլեկտրոնային եղանակով վավերացման ենթակա էլեկտրոնային պայմանագրերի և փաստաթղթերի փոխանակման համար անհրաժեշտ էլեկտրոնային համակարգը	Ներդրվել է նոտարների կողմից էլեկտրոնային եղանակով ապրանքի ապառիկ վաճառքի պայմանագրերի վավերացման և դրանց համար կատարողական մակագրության թերթի տրամադրման էլեկտրոնային համակարգը	2024 թվականի 4-րդ եռամսյակ	Չկատարված	Իրականացվել են ծրագրային լուծման մշակման աշխատանքներ, բոլոր բանկերի համար հստակ տիպային պայմանագրերի ձևեր սահմանելու համատեքստում քննարկումներ են ծավալվել: Սակայն որդեգրվել է առավել համակարգային լուծում. նոտարական համակարգի հնարավորինս ամբողջական թվայնացումն ապահովելու ուղղությամբ իրականացվել են ուսումնասիրություններ, մշակվել է համապատասխան տեխնիկական առաջադրանք, որը վերջնական լրամշակումների փուլում է:		Առկա չէ:

Արդյունքային ցուցանիշ	Առկա ցուցանիշ	Արդյունքին հասնելու ժամկետ	Ցուցանիշի թիվը		Նշումներ	Տվյալների հավաքման միջոց
1.20.1. Նախատեսվել է ապրանքի ապառիկ վաճառքի պայմանագրերի՝ նոտարի կողմից էլեկտրոնային եղանակով ինքնաշխատ վավերացնելու հնարավորություն նախատեսող համակարգ՝ ապահովելով դրանցից ծագող պարտավորությունների հարկադիր կատարման դեպքում կատարողական մակագրության թերթերի էլեկտրոնային եղանակով տրամադրումը		2024 թվականի 4-րդ եռամսյակ	Նախատեսված	այո	Որդեգրվել է առավել համակարգային լուծում. նոտարական համակարգի հնարավորինս ամբողջական թվայնացումն ապահովելու ուղղությամբ իրականացվել են ուսումնասիրություններ, մշակվել է համապատասխան տեխնիկական առաջադրանք, որը վերջնական լրամշակումների փուլում է:Նման համակարգի ներդրման արդյունքում էլեկտրոնային համակարգի միջոցով առհասարակ կիրականացվեն նոտարական գործողությունները և դրա համար անհրաժեշտ՝ համապատասխան տվյալների շտեմարաններից տվյալների ինքնաշխատ ստացումը:	Առկա չէ:
			Փաստացի	Ոչ		
			Շեղում			

Գործողություն	Թիրախ	Կատարման ժամկետ	Կարգավիճակ	Նշումներ	Ֆինանսական աղբյուր	Ստուգման միջոց
1.21. Ներդնել և գործարկել նոտարի կողմից էլեկտրոնային հաղորդակցության միջոցներով միակողմանի որոշ գործարքներ վավերացնելու և փաստաթղթերի փոխանակման (փոխանցման) պայմաններ	Ներդրվել է նոտարի կողմից որոշ միակողմանի գործարքների՝ էլեկտրոնային հաղորդակցության միջոցներով վավերացման և փաստաթղթերի փոխանակման համակարգը	2024 թվականի 4-րդ եռամսյակ	Չկատարված	Որդեգրվել է առավել համակարգային լուծում. նոտարական համակարգի հնարավորինս ամբողջական թվայնացումն ապահովելու ուղղությամբ իրականացվել են ուսումնասիրություններ, մշակվել է համապատասխան տեխնիկական առաջադրանք, որը վերջնական լրամշակումների փուլում է:Նման համակարգի ներդրման արդյունքում էլեկտրոնային համակարգի միջոցով առհասարակ կիրականացվեն նոտարական գործողությունները և դրա համար անհրաժեշտ՝ համապատասխան տվյալների շտեմարաններից տվյալների ինքնաշխատ ստացումը:		Առկա չէ:

Արդյունքային ցուցանիշ	Առկա ցուցանիշ	Արդյունքին հասնելու ժամկետ	Ցուցանիշի թիվը		Նշումներ	Տվյալների հավաքման միջոց
1.21.1. Նոտարները միակողմանի գործարքները կարող են վավերացնել էլեկտրոնային տեսահաղորդակցության միջոցներով		2024 թվականի 4-րդ եռամսյակ	Նախատեսված	3	Որդեգրվել է առավել համակարգային լուծում. նոտարական համակարգի հնարավորինս ամբողջական թվայնացումն ապահովելու ուղղությամբ իրականացվել են ուսումնասիրություններ, մշակվել է համապատասխան տեխնիկական առաջադրանք, որը վերջնական լրամշակումների փուլում է:Նման համակարգի ներդրման արդյունքում էլեկտրոնային համակարգի միջոցով առհասարակ կիրականացվեն նոտարական գործողությունները և դրա համար անհրաժեշտ՝ համապատասխան տվյալների շտեմարաններից տվյալների ինքնաշխատ ստացումը:	Առկա չէ:
			Փաստացի	0		
			Շեղում			

ՆՊԱՏԱԿ 4. ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԳՈՒԽՈՒՄՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ							
Վերջնական արդյունք	Բարձրացել է արդարադատության արդյունավետությունը, դատական համակարգի նկատմամբ հանրության վստահությունը						
Գործողություն	Թիրախ	Կատարման ժամկետ	Կարգավիճակ	Նշումներ	Ֆինանսական աղբյուր	Ստուգման միջոց
4.5. Ապահովել հակակոռուպցիոն դատարանների (ներառյալ՝ դրա ակտերի դեմ բերված բողոքները քննող կազմի) արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ շենքային և նյութատեխնիկական միջոցները	Սկսվել և շարունակվում է հակակոռուպցիոն դատարանի (ներառյալ՝ դրա ակտերի դեմ բերված բողոքները քննող կազմի) արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ շենքային և նյութատեխնիկական պայմանների բարելավման գործընթացը	2024 թվականի 2-րդ կիսամյակ	Կատարված	Հակակոռուպցիոն դատարանի ստեղծումից ի վեր՝ հիշյալ դատարանը գործել է Թբիլիսյան խճուղի 3/9 հասցեում գտնվող վարչական շենքում, որի շենքային պայմանների և տարածքի բարեկարգման նպատակով՝ 2022-2024թթ. իրականացված շինարարական և նյութատեխնիկական ապահովման աշխատանքներն ամբողջությամբ ավարտվել են 2024թ. դեկտեմբեր ամսին: ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանը սկզբնական շրջանում գործել է Գարեգին Նժդեհի 23/1 հասցեում, իսկ այնուհետև Արա Սարգսյան 5/1 հասցեում իրականացված շինարարական աշխատանքների ավարտից հետո՝ 2024թ. 2-րդ կիսամյակի ընթացքում դատարանը տեղափոխվել է նշված հասցե և գործում է մինչ օրս՝ ապահովված լինելով բոլոր անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով: Միաժամանակ տեղեկացնում եմ, որ դեռևս 2023թ. ընթացքում թվով 4 դատական նիստերի դահլիճների կահավորման նպատակով ձեռք է բերվել համապատասխան գույք, որն իր տեսակով տարբերվում է նախկինում դատարանների դահլիճների համար ձեռքբերված գույքից (գունային և ձևային առումով):		Հակակոռուպցիոն դատարանը գործում է Երևան քաղաքի Թբիլիսյան խճուղի 3/9 հասցեում, Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանը գործում է Արա Սարգսյան 5/1 հասցեում: